



Հայաստանի Հանրապետություն



Empowered lives.
Resilient nations.

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348 ծրագիր

ՄԱԶԾ ծրագրային ոլորտ՝

Էներգետիկա և շրջակա միջավայր

Ծրագրի համար՝

ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348 Ծրագրի փաստաթուղթը ստորագրվել է ՀՀ Կառավարության և ՄԱԶԾ-ի կողմից 07.07.2017

Նույնականացման համար՝ 5684

Ցինանսավորող՝

Կլիմայի կանաչ հիմնադրամ

Իրականացնող

կազմակերպություն՝

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

Տևողություն՝

6 տարի (2017-2023թթ.)

Ազգային իրազործող՝


ՀՀ բնապահպանության նախարարություն,

Ծրագրի բյուջե՝

ԿԿՀ՝ 20,000,000 ԱՄՆ դոլար

Համաֆինանսավորում՝

9,820,000 ԱՄՆ դոլար



Նախապատմություն: Հայաստանում շենքերի ոլորտը էներգիայի ամենամեծ սպառողներից է: Հայաստանում շենքերի մեծ մասը կառուցվել է խորհրդային տարիներին (35-60 տարի առաջ), երբ հիմնականում անտեսվում էին էներգաարդյունավետության (ԷԱ) պահանջները: Համաձայն ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի կողմից ներկայացված ջերմոցային գազերի 2010թ. կադաստրի առաջնային էներգետիկ ռեսուրսների գրեթե 28% -ը սպառվում է շենքերի կողմից՝ հիմնականում բնակելի հատվածում, որը կազմում է ջերմոցային գազերի (ԶԳ) ընդհանուր արտանետումների 20%-ը: Երկար ջեռուցման սեզոնով և -5°C ձմեռային միջին ջերմաստիճանով Հայաստանի ընդգծված մայրցամաքային կլիմայի պայմաններում շենքերում էներգիայի սպառումը հիմնականում կապված է տարածքի ջեռուցման հետ:

Բնակելի շենքեր և վառելիքային աղքատություն: Հայաստանում նոր բնակելի շենքերի ջեռուցման համար ջերմային էներգիայի միջին սպառումը կազմում է տարեկան 185 կՎտ/մ², իսկ գոյություն ունեցող շենքերում դրա կարիքը զգալիորեն ավելի բարձր է: Էներգախնայողության առավել զգալի ներուժով օժտված են պանելային շենքերը: Միայն պանելային շենքերում ջերմային արդիականացման արդյունքում ստացվող էներգախնայողության ներուժը տարեկան ավելի քան 1.25 ՏՎտ է, իսկ ԶԳ նվազեցման պոտենցիալը՝ տարեկան 250,000 տ CO₂:

Հայաստանում տնային տնտեսությունների էներգետիկ ծախսերը ջեռուցման սեզոնում բարձր են և կազմում են տնային տնտեսությունների եկամտի 14-20%, ինչը վառելիքային աղքատության ցուցանիշ է:

Հանրային շենքեր: Հանրային շենքերի տարեկան շահագործման ծախսերում էներգետիկ ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն: Կրթական, մունիցիպալ և առողջապահական նշանակության շենքերում կատարված հետազոտության տվյալներից պարզվում է, որ տարեկան ընդհանուր ծախսերի 11-20%-ը կազմում է էներգիայի համար կատարված վճարները: Էներգետիկ ծախսերը մասնավորապես բարձր են կրթական հաստատություններում: Ձմռանը շատ հանրային շենքեր չեն շահագործվում, իսկ աշխատելու դեպքում՝ ջերմային հարմարավետության մակարդակը էապես ցածր է լինում, քանի որ նրանք չեն կարողանում պատշաճ մակարդակի ջեռուցման ծախսերը հոգալ: Հանրային շենքերի ԷԱ արդիականացման համար անհրաժեշտ ներդրումներ կատարելու առումով Հայաստանի Հանրապետության կառավարության և քաղաքապետարանների առկա բյուջեները ֆինանսապես սահմանափակ են:

Ծրագրի նպատակը: Մասշտաբավորել Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները և նվազեցնել ներդրումների ռիսկերի պատկերը՝ դրանով խրախուսել մասնավոր հատվածի ներդրումներն ու նվազեցնել վառելիքային աղքատության մակարդակը: Ծրագիրը ԷԱ ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայր և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդել կստեղծի, որը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ԶԳ արտանետումների կրճատմանը: Ծրագիրը կխթանի նաև կանաչ աշխատատեղերի ստեղծումը, մասնավոր ու հանրային հատվածի կողմից լրացուցիչ ֆինանսավորումը և կնպաստի աղքատության կրճատմանը:

Հիմնական գործընկերներ:

Երևանի քաղաքապետարան
Այլ քաղաքապետարաններ
ՀՀ ԿԱ քաղաքաշինության
պետական կոմիտե

ՀՀ Էներգետիկ
ենթակառուցվածքների և
բնական պաշարների
նախարարություն

ՀՀ աշխատանքի և
սոցիալական հարցերի
նախարարություն



Ծրագրի գրասենյակ՝

Կառավարական 3-րդ շենք, 549
և 533 սենյակներ,
Երևան, 0010, ՀՀ
Հեռ.՝ (+374 10) 583 920,
583 932 (ներ.18, 22)
Ֆաքս՝(+374 10) 583 933
buildings@nature.am
www.nature-ic.am



Չնայած նրան, որ ԷԱ ներդրումների համար տեղական բանկերը վարկային գիծ են տրամադրում, շենքերի ԷԱ արդիականացման ֆինանսավորման համար պոտենցիալ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ բնակելի առանձնատների, բազմաբնակարան և հասարակական շենքերի համար առկա է դեռևս ձևավորված ֆինանսական գործիքների փորձի և մշակույթի պակաս:

Ծրագրի բաղադրիչները

1. Շենքերի ոլորտում մոնիտորինգի, հաշվետվության և ստուգման (ՄՀՍ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում:

Նպատակն է շենքերի ոլորտի համար մի ուժեղ ՄՀՍ համակարգ ստեղծել, որը հնարավորություն կտա շենքերում էներգիայի օգտագործման մոնիտորինգ իրականացնել, ընտրել ԷԱ արդիականացման համար գերակա շենքերը, և որոշել էներգիայի խնայողության արդյունքում ստացված քանակական և դրամական արդյունքները: Ուժեղ ՄՀՍ-ը անհրաժեշտ է ԷԱ արդիականացման ներդրումների պատմությունը կառուցելու համար:

2. Քաղաքականության ռիսկերի նվազեցում: Այս բաղադրիչը կաջակցի ազգային, ենթազգային և տեղական կառավարման մարմինների կողմից ԷԱ արդիականացմանը նպաստող ռազմավարական ծրագրեր ընդունել և իրականացնել: Ռիսկերի նվազեցման գործիքները ուղղակիորեն և անուղղակիորեն կլուծեն առևտրային վարկատուների կողմից ԷԱ արդիականացմանն ուղղված ֆինանսավորման ներդրումային ռիսկերը:

3. Ֆինանսական ռիսկերի նվազեցում: Այս բաղադրիչը կաշխատի տեղական բանկերի և այլ համապատասխան ազգային և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ: Ռիսկերի նվազեցման այդ գործիքներն արտահայտված կլինեն մի քանի ձևով, այդ թվում՝ ֆինանսական ինստիտուտների կողմից տրամադրվող վարկային գծեր և/կամ վարկային երաշխիքներ, որոնք տեղական առևտրային բանկերին կխրախուսեն մասնավոր էներգետիկ ծառայություններ մատակարարող ընկերություններին (ԷԾՄԸ) և/կամ շենքի սեփականատերերին վարկեր տրամադրել:

4. Ֆինանսական արտոնություններ: Նպատակային ֆինանսական արտոնություններ կտրամադրվեն և կառաջարկվեն նաև շենքերի/բնակարանների սեփականատերերին կամ այդ հաճախորդներին սպասարկող ԷԾՄԸ-ներին՝ ապահովելով, որ առավել խոցելի տնային տնտեսությունները կարողանան իրենց թույլ տալ ԷԱ արդիականացման ծախսեր կատարել:

Ծրագրի արդյունքները և շահառուները

Բարելավված ԷԱ-ով և ցածր էներգատարությամբ շենքերի շնորհիվ Ծրագիրը կհասնի ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատումների: Համաձայն Երևանում իրականացված ՄԱԶԾ պիլոտային ծրագրի և էներգաաուդիտի արդյունքների՝ շենքերում կարելի է հասնել մինչև 60% էներգիայի սպառման ծախսարդյունավետ կրճատման:

ԷԱ միջամտությունների 20 տարվա կյանքի ընթացքում ԶԳ արտանետումների կրճատումը կկազմի՝

- Ուղղակի ազդեցություն՝ 1.4 մլն տCO₂
- Անուղղակի ազդեցություն՝ 4.2 - 4.4 մլն տCO₂

Ծրագիրը կանդրադառնա հանրային շենքերին, բազմաբնակարան շենքերին, ինչպես նաև առանձնատներին:

Ուղղակի շահառուների գնահատված ընդհանուր քանակը՝ 210 000:

Ծրագրային փաստաթղթի հակիրճ տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ [http://www.nature-](http://www.nature-ic.am/Content/Projects/18/GCF%20PROJECT%20BRIEF%20ENG.pdf)

[ic.am/Content/Projects/18/GCF%20PROJECT%20BRIEF%20ENG.pdf](http://www.nature-ic.am/Content/Projects/18/GCF%20PROJECT%20BRIEF%20ENG.pdf)